ման փափուկ խոտերի վրայ, եւ երեկոյեան ճառագայթներից լուսաւորուած փայլուն ծղօտները հանդարտ կերպով տատանւում էին, ծածանւում էին եւ իրանց բաց-կանաչագոյն ալիքներով միախառնւում էին ծովակի արծաթեայ ալիքների հետ, որ զգուշութեամբ զարկւում էին եզերքին, կարծես վախենալով, մի գուցէ խանգարեն ծաղիկների խորհրդաւոր խաղաղութիւնը:

Վերեւում, լեռան լանջաց վրայ, սփռուած էին ոչխարների հոտերը, իս ներքեւում, հարթ մարգագետնի վրայ, որը ծովի ափերով, կանաչագոյն լայն ժապաւէնի նման, ձգւում էր հեռու եւ հեռու, արածում էին ձիաների երամակները եւ արջառների նախիրները: Մի փոքրիկ գետակ շտապելով դուրս էր վազում ձորի միջից եւ, մի բան որոնողի նման, մի քանի պտոյտներ գործելով արօտամարգերի վրայ, քմահաճ երեխայի պէս կարկաչում էր, տրտնջում էր, պատահած քարերի կուրծքին էր խփում, պատահած թուփերի արմատներն էր քանդում եւ, բաւական աղմուկ բարձրացնելուց յետոյ, մի առանձին գոհունակութեամբ մտնում էր ծովը, այնտեղ ձայնը կտրում էր, կարծես մի մեծ գործ էր կատարել: Նրա պարզ, թափանցիկ յատակի գոյնզգոյն խիճերը ժպտում էին, ծիծաղում էին նրա միամիտ չարութեան վրայ: Տեղ-տեղ երեւում էին փոքրիկ լճակներ: Ինձ թւում էր, որ այդ ապստամբները, որեւիցէ դժգոհութեան պատճառով, բաժանուել էին ծովից եւ նրա ափերի մօտ իրանց համար անկախ, փոքրիկ աւազաններ էին հիմնել: Բայց գոնէ միանային նրանք, այն ժամանակ դարձեալ մի միտք կունենար: Այդ դրութեան մէջ, բաւական էր արեւի մի քանի օրոայ տապն ու կրակը, որ լափէր, ցամաքացնէր նրանց ունեցած ջուրը: Եղէգնաբոյսերը այնքան առատութեամբ աճել, բազմացել էին նրանց եզերքի վրայ, որ փոքր էր մնում բոլորովին ճնշէին, բոլորովին խեղդէին այդ լճակները իրանց խտութեան մէջ: Նրանք ծծում էին բոլոր կենսական հիւթը, նրանք արգելում էին մաքուր օդի անցուդարձը, եւ այդ պատճառով, այդ ողորմելի լճակները, անշարժութեան մէջ մնալով, ճահիճների ձեւ էին ստացել:

Չնայելով, որ ամառոայ սաստիկ տօթերի ժամանակն էր, բայց այստեղ գարունը կարծես դեռ նոր էր սկսւում: Կեռասի ահագին ծառերը, որ վայրենի դրութեան մէջ աճելով, ձգոել էին մինչեւ երկինքը, դեռ նոր էին հասցնում իրանց վարդագոյն պտուղները: Ընկուզենիները, որոնք իրանց բարձր լայնատարած ճիւղաւորութեամբ լցրել էին ձորերի խորքերը, այդ հսկայ ընկուզենիները դեռ պտուղ չէին ցոյց տալիս: Վայրենի կակաչը, պուտը, ամանկոտրուկը, գարնան այդ առաջին աւետաբերները, դեռ նոր էին իրանց կարմիր գլխիկները բարձրացրել խոտերի ճոխ խտութեան միջից: Կարմիր կակաչների նման պտտւում էին կարմիր հարսներ ու աղջիկներ: Նրանց «լէ-լէ-